# ՀԱՅՓՈՍՏ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԵՂՄՎԱԾ և ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԳԱԶԱԲԱԼՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18»

ք. Երևան «___» ______ 2026 թ.

«Հայփոստ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ-ն, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **« Տրանսպորտային միջոցների սեղմված և հեղուկ գազի գազաբալոնների համակարգի կարգաբերման և վերանորոգման»** ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա-գրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև **5 500 000** (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4.3. Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-թդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում և նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ |
| Հասցե՝ ք.Երևան, Արշակունյանց 65/5 | ք.Երևան, Թևոսյան 2/2 |
| «Կոնվերսբանկ» ՓԲԸ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ 1930003703150100 | ՀՀ 163078119282 |
| ՀՎՀՀ 02507464 | ՀՎՀՀ 08627168 |
| Էլ.փոստ gnumner@haypost.am | hexine.smbatyan@gmail.com |
| | +37499447465 |
| Digitally signed by ABRAHAMYAN ARMAN 2610900171 Date: 2026.02.06 16:32:02 AMT | Ստորագրող |
| Ա.Աբրահամյան (ստորագրություն) Կ.Տ. | ՀԵՂՈՒՇ ՍՄԲԱԹՅԱՆ 5809790488 |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրո... չհակասող դրույթներ:*

2026-02-05 14:23:19 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Հավելված N 1*
*«          »               2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50531151/503 | Սեղմված գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում՝ համաձայն հավելված 1.1-ի: Ծառայությունները պետք է մատուցվեն Երևանի տարածաշրջանում: | դրամ | 2500000 | 1 | ք.Երևան | Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ պատվիրատուի կողմից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 2 | 50531151/504 | Հեղուկ գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում՝ համաձայն հավելված 1.2-ի: Ծառայությունները պետք է մատուցվեն Երևանի տարածաշրջանում: | դրամ | 3000000 | 1 | ք.Երևան | Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ պատվիրատուի կողմից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյանց 65/5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703150100
ՀՎՀՀ 02507464
Էլ.փոստ gnumner@haypost.am

-----------------------Հ.Աբրահամյան
(ստորագրություն) Կ.Տ

Digitally signed by ABRAHAMYAN ARMAN 2610900171
Date: 2026.02.06 16:32:15 AMT

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ
ք.Երևան, Թևոսյան 2/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163078119282
ՀՎՀՀ 08627168
hexine.smbatyan@gmail.com
+37499447465

--------------------------Գ.Հովսեփյան
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*«          »                2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

Չափաբաժին 1 Սեղմված գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում

| | Ապրանքներ | չափման միավոր | Գին |
|---|---|---|---|
| 1 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, թույլ/AT09 | հատ | 23,500 |
| 2 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, հզոր/PALLADIO/ | հատ | 48,000 |
| 3 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, միջին/AT09 XP | հատ | 26,500 |
| 4 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, միջին/ | հատ | 16,000 |
| 5 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /համակարգի | հատ | 14,200 |
| 6 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /սովորական, հզոր/ | հատ | 49,000 |
| 7 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /սովորական, միջին/ | հատ | 19,500 |
| 8 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ /սովորական/ | հատ | 13,600 |
| 9 | Սեղմված գազի ճնշման կարգավորիչ համակարգի, միջինի հզոր AT13XP | հատ | 32,000 |
| 10 | Թեքահարթակ 4 մխ | հատ | 13,000 |
| 11 | Համակարգ AEB 4 մխ արկղ | հատ | 22,000 |
| 12 | Համակարգ DIGI AEB 4 մխ. արկղ | հատ | 39,000 |
| 13 | Համակարգ STAG 4 մխ արկղ (Go Fast) | հատ | 39,000 |
| 14 | Համակարգ STAG 4 մխ արկղ (QBOX PLUS) | հատ | 58,000 |
| 15 | Համակարգ STAG 4 մխ արկղ (QBOX BASIC) | հատ | 49,000 |
| 16 | Համակարգ DIGI AEB 4 մխ. OBD արկղ | հատ | 49,000 |
| 17 | Համակարգ AEB 4 մխ, արկղ OBD | հատ | 26,000 |
| 18 | Համակարգիչ համակարգի DIGI AEB 4 մխ | հատ | 33,000 |
| 19 | Համակարգիչ համակարգի AEB 4 մխ | հատ | 18,000 |
| 20 | Համակարգիչ համակարգի STAG 4 մխ / GO FAST / | հատ | 38,000 |
| 21 | Համակարգիչ համակարգի DIGI AEB 4 մխ (OBD) | հատ | 44,500 |
| 22 | Տվիչ համակարգի | հատ | 2,800 |
| 23 | Տվիչ ջերմաստիճանի | հատ | 1,100 |
| 24 | Զտիչ համակարգի մեկ մուտք. | հատ | 1,100 |
| 25 | Զտիչ համակարգի երկու մուտք | հատ | 1,700 |
| 26 | Զտիչ Սեղմված գազի -ճնշման նվազեցուցիչ (ռեդուկտոր) | հատ | 1,100 |
| 27 | Խողովակ Ø12մմ | մետր | 1,700 |
| 28 | Խողովակ Ø 14մմ | մետր | 1,700 |
| 29 | Խողովակ Ø 16մմ | մետր | 1,700 |
| 30 | Խողովակ Սեղմված գազի Ø 12մմ | մետր | 1,900 |
| 31 | Խողովակ իտալական ռամպայի Ø 5մմ | մետր | 1,350 |
| 32 | Խողովակ ռամպայի Ø5մմ | մետր | 900 |
| 33 | Խողովակ լիցքավորման բարձր ճնշման | հատ | 8,000 |
| 34 | Խողովակ անկյունակ | մետր | 400 |
| 35 | Ջրի խողովակ Ø 8մմ | մետր | 900 |
| 36 | Խողովակ Ø 6մմ | հատ | 2,800 |
| 37 | Սեղմված գազի խողովակ Ø 8մմ | մետր | 1,100 |
| 38 | Խողովակ 8մմ պլաստիկ | մետր | 1,700 |
| 39 | Անկյունակ | մետր | 1,700 |
| 40 | Երկաթե ժապավեն | հատ | 560 |
| 41 | Հավաքչի կցամաս | հատ | 560 |

| | | | |
|---|---|---|---|
| 42 | գնդիկավոր կցամաս | հատ | 1,500 |
| 43 | Հեղուկ գազի լիցքավորման կցամաս | հատ | 3,300 |
| 44 | Շթի տակի լիցքավորման կցամաս /կոմպլեկտ/ | հատ | 2,200 |
| 45 | Կցամասեր այլ | հատ | 1,100 |
| 46 | Ջրի կցամաս | հատ | 560 |
| 47 | Թեքահարթակի միացման կցամաս | հատ | 670 |
| 48 | Բալոն Սեղմված գազի 53 լ H | հատ | 41,500 |
| 49 | ԲալոնՍեղմված գազի 53 լ T | հատ | 41,500 |
| 50 | Բալոն Սեղմված գազի 54 T /բարակ/ | հատ | 49,000 |
| 51 | Բալոն Սեղմված գազի 54 լ H /բարակ/ | հատ | 49,000 |
| 52 | Բալոն Սեղմված գազի 54 T | հատ | 41,000 |
| 53 | Բալոն Սեղմված գազի 54 լ H | հատ | 41,000 |
| 54 | Բալոն Սեղմված գազի գլանաձև 51լ | հատ | 28,000 |
| 55 | Բալոն Սեղմված գազի գլանաձև 60լ | հատ | 28,000 |
| 56 | Սեղմված բալոնի գլխարկ | հատ | 2,200 |
| 57 | Փական կարմիր | հատ | 5,700 |
| 58 | լողան (պապլավոկ) | հատ | 16,500 |
| 59 | լողան (պապլավոկ) | հատ | 14,000 |
| 60 | Ֆիտից Սեղմված գազի | հատ | 1,700 |
| 61 | Ճնշաչափ | հատ | 1,700 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՀԵՍՏԱՄԱՍ | | 1,075,700 |
| | **Աշխատանք** | | |
| 1 | Գազի համակարգի /տեսակի/ փոխարինում հաճախորդի կոմպլեկտով | դրամ | 22,350 |
| 2 | Գազի համակարգի տեղադրում | դրամ | 42,600 |
| 3 | Բալոնի տեղադրում (հետևի աշխատանք) | դրամ | 17,400 |
| 4 | Փորձարկում/փաստաթուղթ | դրամ | 7,000 |
| 5 | Արկղի տեղադրում | դրամ | 15,600 |
| 6 | Արկղի փոխարինում | դրամ | 15,600 |
| 7 | Բալոնի ապամոնտաժում | դրամ | 7,200 |
| 8 | Բալոնի փոխարինում առանց ձևափոխման | դրամ | 4,800 |
| 9 | Բալոնի փոխարինում (հիմնակմախքի ձևափոխմամբ) մարդատար | դրամ | 7,200 |
| 10 | Գազի արտահոսքի հայտնաբերում և վերացում | դրամ | 2,400 |
| 11 | Գազի բալոնի միացման խողովակի փոխարինում | դրամ | 2,400 |
| 12 | Գազի կարգավորում հասարակ | դրամ | 1,200 |
| 13 | Գազի համակարգի ապամոնտաժում | դրամ | 13,400 |
| 14 | Գազի համակարգի էլ. վերանորոգում բարդ | դրամ | 9,000 |
| 15 | Գազի համակարգի էլ. վերանորոգում պարզ | դրամ | 5,000 |
| 16 | Գազի համակարգի տեղադրում սովորական | դրամ | 26,700 |
| 17 | Գազի կարգավորում | դրամ | 3,600 |
| 18 | Տվիչի տեղադրում | դրամ | 2,400 |
| 19 | Լիցքավորման խողովակի փոխարինում | դրամ | 2,400 |
| 20 | Լիցքավորումը տակից | դրամ | 4,800 |
| 21 | Լիցքավորման շտուցերի փոխարինում | դրամ | 2,400 |
| 22 | Էմուլյատորի փոխարինում/տեղադրում | դրամ | 7,200 |
| 23 | Ներարկման համակարգի էլ. միացում 4 մխ. | դրամ | 4,800 |
| 24 | Ներարկման համակարգի էլ. միացում 6 մխ. | դրամ | 8,400 |
| 25 | Ներարկման համակարգի էլ. միացում 8 մխ. | դրամ | 11,500 |
| 26 | ներարկիչ (Ինժեկտորի) մաքրում | դրամ | 2,400 |
| 27 | Խողովակի փոխարինում | դրամ | 4,800 |

| | | | |
|---|---|---|---|
| 28 | Անջատիչի  փոխարինում | դրամ | 1,200 |
| 29 | հավաքչի հանում բարդ | դրամ | 11,000 |
| 30 | հավաքչի  հանում պարզ | դրամ | 6,000 |
| 31 | Կոճակի փոխարինում | դրամ | 1,200 |
| 32 | Կոճի փոխարինում | դրամ | 1,200 |
| 33 | Համակարգի ապամոնտաժում | դրամ | 7,200 |
| 34 | Համակարգի տեղադրում | դրամ | 21,800 |
| 35 | Համակարգի փոխարինում | դրամ | 18,000 |
| 36 | Համակարգի տեղադրում սովորական | դրամ | 16,000 |
| 37 | Սեղմված գազի զտիչի փոխարինում | դրամ | 1,200 |
| 38 | Մապ տվիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 39 | Համակարգիչի տեղադրում/փոխարինում | դրամ | 3,600 |
| 40 | Պտուկի ( նիպել) փոխարինում | դրամ | 1,200 |
| 41 | Գնդիկավոր   փոխարինում | դրամ | 1,200 |
| 42 | Խողովակի փոխարինում | դրամ | 1,200 |
| 43 | Խողովակի կոմպլեկտի փոխարինում | դրամ | 3,600 |
| 44 | Խողովակի փոխարինում կոլեկտորի հանումով | դրամ | 13,000 |
| 45 | Մալուխ անջատիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 46 | Միակցիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 47 | Գազի ծորի փոխարինում | դրամ | 2,400 |
| 48 | Պապլավոկի փոխարինում | դրամ | 4,800 |
| 49 | Ջրի խաչուկի  փոխարինում | դրամ | 1,200 |
| 50 | Ռամպայի վերանորոգում | դրամ | 4,800 |
| 51 | Ռամպայի փոխարինում | դրամ | 3,600 |
| 52 | Գազի ճնշման կարգավորիչ /սովորական/ փոխարինում | դրամ | 3,600 |
| 53 | Գազի ճնշման կարգավորիչի էլ. միացում | դրամ | 2,400 |
| 54 | Գազի բարձր ճնշման կարգավորիչի փականի փոխարինում | դրամ | 2,400 |
| 55 | Գազի ճնշման կարգավորիչի  լվացում | դրամ | 3,600 |
| 56 | Գազի ճնշման կարգավորիչի փոխարինում | դրամ | 3,600 |
| 57 | Ռելեի տեղադրում | դրամ | 4,800 |
| 58 | Վերանորոգման հավաքածու փոխարինում | դրամ | 3,600 |
| 59 | Վառոցքի մոմ,մոմի հաղորդալարի  փոխարինում | դրամ | 2,400 |
| 60 | Գագաթի փոխարինում | դրամ | 2,400 |
| 61 | Փականի փոխարինում | դրամ | 4,800 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՆՔ | | 420,750 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1,496,450 |
| | **Մասնկացի առաջարկած գինը** | | **1280000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյանց 65/5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703150100
ՀՎՀՀ 02507464
Էլ.փոստ gnumner@haypost.am

---------------------Շ.Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ
ք.Երևան, Թևոսյան 2/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163078119282
ՀՎՀՀ 08627168
hexine.smbatyan@gmail.com
+37499447465

---------------------------Գ.Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by ABRAHAMYAN ARMAN 2610900171
Date: 2026.02.06 16:32:28 AMT

*Հավելված N 1.2*
*«        »              2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

Չափաբաժին 2 Հեղուկ գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում

| | **Ապրանքներ** | **չափման միավոր** | **Գին** |
|---|---|---|---|
| 1 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, թույլ/AT09 | հատ | 23,500 |
| 2 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, հզոր/PALLADIO/ | հատ | 50,000 |
| 3 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, միջին/AT09 XP | հատ | 26,500 |
| 4 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /համակարգի, միջին/ | հատ | 16,000 |
| 5 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /համակարգի | հատ | 14,200 |
| 6 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /սովորական, հզոր/ | հատ | 51,000 |
| 7 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /սովորական, միջին/ | հատ | 19,500 |
| 8 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ /սովորական/ | հատ | 13,600 |
| 9 | Հեղուկ գազի ճնշման կարգավորիչ համակարգի, միջինի հզոր AT13XP | հատ | 32,000 |
| 10 | Թեքահարթակ 4 մխ | հատ | 13,000 |
| 11 | Համակարգ AEB 4 մխ արկղ | հատ | 22,000 |
| 12 | Համակարգ DIGI AEB 4 մխ. արկղ | հատ | 40,000 |
| 13 | Համակարգ STAG 4 մխ արկղ (Go Fast) | հատ | 40,000 |
| 14 | Համակարգ STAG 4 մխ արկղ (QBOX PLUS) | հատ | 61,500 |
| 15 | Համակարգ STAG 4 մխ արկղ (QBOX BASIC) | հատ | 52,000 |
| 16 | Համակարգ DIGI AEB 4 մխ. OBD արկղ | հատ | 52,000 |
| 17 | Համակարգ AEB 4 մխ, արկղ OBD | հատ | 28,700 |
| 18 | Համակարգիչ համակարգի DIGI AEB 4 մխ | հատ | 35,800 |
| 19 | Համակարգիչ համակարգի AEB 4 մխ | հատ | 18,000 |
| 20 | Համակարգիչ համակարգի STAG 4 մխ / GO FAST / | հատ | 38,000 |
| 21 | Համակարգիչ համակարգի DIGI AEB 4 մխ (OBD) | հատ | 46,000 |
| 22 | Տվիչ համակարգի | հատ | 2,800 |
| 23 | Տվիչ ջերմաստիճանի | հատ | 1,100 |
| 24 | Զտիչ համակարգի մեկ մուտք. | հատ | 1,100 |
| 25 | Զտիչ համակարգի երկու մուտք | հատ | 1,700 |
| 26 | Զտիչ հեղուկ գազի -ճնշման նվազեցուցիչ (ռեդուկտոր) | հատ | 1,100 |
| 27 | Խողովակ Ø12մմ | մետր | 1,700 |
| 28 | Խողովակ Ø 14մմ | մետր | 1,700 |
| 29 | Խողովակ Ø 16մմ | մետր | 1,700 |
| 30 | Խողովակ հեղուկ գազի Ø 12մմ | մետր | 1,900 |
| 31 | Խողովակ իտալական ռամպայի Ø 5մմ | մետր | 1,350 |
| 32 | Խողովակ ռամպայի Ø5մմ | մետր | 900 |
| 33 | Խողովակ լիցքավորման բարձր ճնշման | հատ | 8,000 |
| 34 | Խողովակ անկյունակ | մետր | 400 |
| 35 | Ջրի խողովակ Ø 8մմ | մետր | 900 |
| 36 | Խողովակ Ø 6մմ | հատ | 2,800 |
| 37 | Հեղուկ գազի խողովակ Ø 8մմ | մետր | 1,100 |
| 38 | Խողովակ 8մմ պլաստիկ | մետր | 1,700 |
| 39 | Անկյունակ | մետր | 1,700 |
| 40 | Երկաթե ժապավեն | հատ | 560 |
| 41 | Հավաքչի կցամաս | հատ | 560 |
| 42 | գնդիկավոր կցամաս | հատ | 1,500 |

| | | | |
|---|---|---|---|
| 43 | Հեղուկ գազի լիցքավորման կցամաս | հատ | 3,300 |
| 44 | Շթի տակի լիցքավորման կցամաս /կոմպլեկտ/ | հատ | 2,200 |
| 45 | Կցամասեր այլ | հատ | 1,100 |
| 46 | Ջրի կցամաս | հատ | 560 |
| 47 | Թեքահարթակի միացման կցամաս | հատ | 670 |
| 48 | Բալոն հեղուկ գազի 53 լ H | հատ | 43,000 |
| 49 | Բալոն հեղուկ գազի 53 լ T | հատ | 43,000 |
| 50 | Բալոն հեղուկ գազի 54 T /բարակ/ | հատ | 52,000 |
| 51 | Բալոն հեղուկ գազի 54 լ H /բարակ/ | հատ | 52,000 |
| 52 | Բալոն հեղուկ գազի 54 T | հատ | 43,000 |
| 53 | Բալոն հեղուկ գազի 54 լ H | հատ | 43,000 |
| 54 | Բալոն հեղուկ գազի գլանաձև 51լ | հատ | 31,500 |
| 55 | Բալոն հեղուկ գազի գլանաձև 60լ | հատ | 31,500 |
| 56 | Հեղուկ բալոնի գլխարկ | հատ | 2,200 |
| 57 | Փական կարմիր | հատ | 5,700 |
| 58 | լողան (պապլավոկ) | հատ | 18,000 |
| 59 | լողան (պապլավոկ) | հատ | 16,000 |
| 60 | Ֆիտիգ հեղուկ գազի | հատ | 1,700 |
| 61 | Ճնշաչափ | հատ | 1,700 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՀԵՍՏԱՄԱՍ | | 1,121,700 |

**Աշխատանք**

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Գազի համակարգի /տեսակի/ փոխարինում հաճախորդի կոմպլեկտով | դրամ | 25,500 |
| 2 | Գազի համակարգի տեղադրում | դրամ | 45,200 |
| 3 | Բալոնի տեղադրում (հետևի աշխատանք) | դրամ | 18,400 |
| 4 | Փորձարկում/փաստաթուղթ | դրամ | 7,000 |
| 5 | Արկղի տեղադրում | դրամ | 17,600 |
| 6 | Արկղի փոխարինում | դրամ | 17,600 |
| 7 | Բալոնի ապամոնտաժում | դրամ | 7,200 |
| 8 | Բալոնի փոխարինում առանց ձևափոխման | դրամ | 4,800 |
| 9 | Բալոնի փոխարինում (հիմնակմախքի ձևափոխմամբ) մարդատար | դրամ | 7,200 |
| 10 | Գազի արտահոսքի հայտնաբերում և վերացում | դրամ | 2,400 |
| 11 | Գազի բալոնի միացման խողովակի փոխարինում | դրամ | 2,400 |
| 12 | Գազի կարգավորում հասարակ | դրամ | 1,200 |
| 13 | Գազի համակարգի ապամոնտաժում | դրամ | 14,400 |
| 14 | Գազի համակարգի էլ. վերանորոգում բարդ | դրամ | 9,000 |
| 15 | Գազի համակարգի էլ. վերանորոգում պարզ | դրամ | 5,000 |
| 16 | Գազի համակարգի տեղադրում սովորական | դրամ | 30,000 |
| 17 | Գազի կարգավորում | դրամ | 3,600 |
| 18 | Տվիչի տեղադրում | դրամ | 2,400 |
| 19 | Լիցքավորման խողովակի փոխարինում | դրամ | 2,400 |
| 20 | Լիցքավորումը տակից | դրամ | 4,800 |
| 21 | Լիցքավորման շտուցերի փոխարինում | դրամ | 2,400 |
| 22 | Էմուլյատորի փոխարինում/տեղադրում | դրամ | 7,200 |
| 23 | Ներարկման համակարգի էլ. միացում 4 մխ. | դրամ | 4,800 |
| 24 | Ներարկման համակարգի էլ. միացում 6 մխ. | դրամ | 8,400 |
| 25 | Ներարկման համակարգի էլ. միացում 8 մխ. | դրամ | 12,000 |
| 26 | ներարկիչ (Ինժեկտորի) մաքրում | դրամ | 2,400 |
| 27 | Խողովակի փոխարինում | դրամ | 4,800 |

| | | | |
|---|---|---|---|
| 28 | Անջատիչի փոխարինում | դրամ | 1,200 |
| 29 | հավաքչի հանում բարդ | դրամ | 12,000 |
| 30 | հավաքչի հանում պարզ | դրամ | 6,000 |
| 31 | Կոճակի փոխարինում | դրամ | 1,200 |
| 32 | Կոճի փոխարինում | դրամ | 1,200 |
| 33 | Համակարգի ապամոնտաժում | դրամ | 7,200 |
| 34 | Համակարգի տեղադրում | դրամ | 23,800 |
| 35 | Համակարգի փոխարինում | դրամ | 20,000 |
| 36 | Համակարգի տեղադրում սովորական | դրամ | 18,000 |
| 37 | Հեղուկ գազի զտիչ փոխարինում | դրամ | 1,200 |
| 38 | Մապ տվիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 39 | Համակարգիչի տեղադրում/փոխարինում | դրամ | 3,600 |
| 40 | Պտուկի ( նիպել) փոխարինում | դրամ | 1,200 |
| 41 | Գնդիկավոր փոխարինում | դրամ | 1,200 |
| 42 | Խողովակի փոխարինում | դրամ | 1,200 |
| 43 | Խողովակի կոմպլեկտի փոխարինում | դրամ | 3,600 |
| 44 | Խողովակի փոխարինում կոլեկտորի հանումով | դրամ | 15,000 |
| 45 | Մալուխ անջատիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 46 | Միակցիչի փոխարինում | դրամ | 2,400 |
| 47 | Գազի ծողի փոխարինում | դրամ | 2,400 |
| 48 | Պապլավոկի փոխարինում | դրամ | 4,800 |
| 49 | Ջրի խաչուկի փոխարինում | դրամ | 1,200 |
| 50 | Ռամպայի վերանորոգում | դրամ | 4,800 |
| 51 | Ռամպայի փոխարինում | դրամ | 3,600 |
| 52 | Գազի ճնշման կարգավորիչ /սովորական/ փոխարինում | դրամ | 3,600 |
| 53 | Գազի ճնշման կարգավորիչի էլ. միացում | դրամ | 2,400 |
| 54 | Գազի բարձր ճնշման կարգավորիչի փականի փոխարինում | դրամ | 2,400 |
| 55 | Գազի ճնշման կարգավորիչի լվացում | դրամ | 3,600 |
| 56 | Գազի ճնշման կարգավորիչի փոխարինում | դրամ | 3,600 |
| 57 | Ռելեի տեղադրում | դրամ | 4,800 |
| 58 | Վերանորոգման հավաքածու փոխարինում | դրամ | 3,600 |
| 59 | Վառոցքի մոմ,մոմի հաղորդալարի փոխարինում | դրամ | 2,400 |
| 60 | Գազաթի փոխարինում | դրամ | 2,400 |
| 61 | Փականի փոխարինում | դրամ | 4,800 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՆՔ | | 445,300 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1,567,000 |
| | **Մասնկացի առաջարկած գինը** | | **1321000** |

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | «Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ |
| Հասցե՝ ք.Երևան, Արշակունյանց 65/5 | ք.Երևան, Թևոսյան 2/2 |
| «Կոնվերսբանկ» ՓԲԸ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ 1930003703150100 | ՀՀ 163078119282 |
| ՀՎՀՀ 02507464 | ՀՎՀՀ 08627168 |
| Էլ.փոստ gnumner@haypost.am | hexine.smbatyan@gmail.com |
| | +37499447465 |
| --------------------Շ.Ալեքսանյան | ----------------------------Գ.Հովսեփյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Digitally signed by ABRAHAMYAN ARMAN 2610900171
Date: 2026.02.06 16:32:41 AMT

*Հավելված N 2*
*«          »          2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50531151/503 | Սեղմված գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 2 | 50531151/504 | Հեղուկ գազի գազաբալոնների համակարգի կարգաբերում և վերանորոգում | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյանց 65/5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703150100
ՀՎՀՀ 02507464
Էլ.փոստ gnumner@haypost.am

----------------------Շ.Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by ABRAHAMYAN ARMAN 2610900171
Date: 2026.02.06 16:32:58 AMT

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Գևորգ Հովսեփյան Հովսեփի» ԱՁ
ք.Երևան, Թևոսյան 2/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163078119282
ՀՎՀՀ 08627168
hexine.smbatyan@gmail.com
+37499447465

----------------------------Գ.Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«      »          2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _______________________ | _______________________ |
| _______________________ | _______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ____________________ | հհ_____________________ |
| հվհհ __________________ | հվհհ___________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _______________________ | _______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _______________________ | _______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«     »          2026թ. կնքված*
*«ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«      »           2026  թ. կնքված*
*ՀՓ-ԳՀԾՁԲ-26/18» ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

____________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և _____________________-ի միջև «--»        20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի     միջև  «--»   20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____________________________________________              ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»        20  թ.